9 (106). ԽԵՔՅԱՐ-ԽԵՔՅԱՐ ՊԱՊՍ Է

Մարթըմ կերթա տուն մի խոնախ։

Էդ տուն լե լըվացք կէղնի։ Կէրթան բաղնիք, բաղնքից գիգան, ուրանց խաս շորեր կը հանին, կը լնան վըր շըրդին։ Էդոնց լե ջեհել քուռակըմ կէղնի թավլեն կապուկ։

Էդ խոնախ շորեր օր կը տեսի վըր շըրդին, ջեհել քուռակ լե թավլեն կապուկ, գիգա կը նստի խըսա կէնին իրարու։

Էդ տնեցիք էգ օր լե տաշտ մի գաթա կը թխեն, լցուկ կէղի սնդուկ։

Իրկուն կէղնի, իրարու վրեն օր կը ժողվվին, կըսեն. «Արեք ամեկս հեքիաթ մի ըսինք»։

Ամեկ հեքիաթըմ կըսին, գոր գիգա էդ խոնըխին։ Խոնախ կըսե.

— Հեքիաթ, հեքիաթ պապս է,
Գեհլան քուռակ տակս է,
Շըրդի շորեր պարկս է,
Մնտկի գաթեն փորս է,
Իրիկվան ծաղրիկ՝
Հըտ լուսուն լալիկ,
Էամ, էրերամ
Հալչոբու գլխիկ։

Հըտ լուսուն տան տեր կէլնի, կը տեսնա օր, նա՛ քուռակ կա, հետ շըրդի վրեն շոր կա, ոչ սնդրկի մեջ՝ գաթա։

Կրսին. «Մը՛ր խոնարհ պապիկ մոլիկ զուլան քոնց՝ մենք չհասկը-
ցանք։ Մարդ հ՚ելեր առեր է մեր շորեր, հեծեր է գեհենյան քուռակն
ու դացիս։

Կելնան, կէրթան կոլորդին էջ խոնարհ չեն կրոնա. գդնաւ կը
մնան ուրանց հալու հետ։